

Արձանագրություն N4

Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի գիտխորհրդի 27.10.2017թ. նիստի

Օրակարգ.

1. Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի բակալավրիատի առկա ուսուցման ծրագրերի մշակման հարցը:
2. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 32 անդամներից 19-ը:

1. ԼՍԵՑԻՆ՝

Ֆակուլտետի դեկան Ս. Աբրահամյանը առաջարկեց օրակարգում ընդգրկել ֆակուլտետի անվանափոխության հարցը, քանի որ ևս մեկ տարբերակ էր առաջարկվել: Ալնուհետև գիտխորհուրդն անցավ ամբիոններում ծրագրերի մշակման ուղղությամբ կատարված աշխատանքների քննարկմանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Շ. Պարոնյանն ու Ռ. Ղազարյանը զեկուցեցին, որ ծրագրերի անունների փոփոխության խնդիր չունեն, սակայն ծրագրերն ավելի արդիական դարձնելու համար որոշ բովանդակային փոփոխություններ են անում: Դեկանը ավելացրեց, որ անգլիական, ֆրանսիական, ռոմանական և գերմանական բանասիրության ամբիոնների՝ հավասարաչափ երկու օտար լեզվի տիրապետող մասնագետներ պատրաստելու ուղղությամբ կատարվող ծրագրային փոփոխություններն ընթացքի մեջ են: Նոր ծրագիրը կոչվելու է «Օտար լեզուներ և հաղորդակցություն», այն արդեն բազմիցս քննարկվել է ամբիոնային և դեկանատի նիստերին և այժմ, երբ արդեն քննարկվել են ծրագրի բոլոր մանրամասները, անհրաժեշտ է գիտխորհրդի հավանությունը՝ ծրագրի մշակման հայտը ձևակերպելու և ծրագրի մշակման գործընթացը սկսելու համար:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Միաձայն քվեարկության արդյունքում գիտխորհուրդը որոշեց, որ, հաշվի առնելով «Օտար լեզուներ և հաղորդակցություն» ծրագրի շրջանակներում հավասարաչափորեն երկու օտար լեզվի տիրապետող մասնագետ-լեզվաբաններ պատրաստելու անհրաժեշտությունը, պետք է դիմել ԵՊՀ ռեկտորատ բակալավրիատի առկա ուսուցման «Օտար լեզուներ և հաղորդակցություն» ծրագրի մշակման գործընթացն սկսելու արտոնման իրավունք ստանալու խնդրանքով:

ԼՍԵՑԻՆ՝

Դեկանը զեկուցեց, որ անհրաժեշտություն կա ևս մեկ անգամ քվեարկություն անցկացնել ֆակուլտետի նոր անունը վերջնականապես որոշելու համար, քանի որ եղել է ևս մեկ առաջարկ, այն է՝ «Եվրոպական լեզուներ և միջմշակութային հաղորդակցություն»: Այսպիսով, քվեարկության են դրվում նշված և արդեն որոշակի հավանության արժանացած «Եվրոպական լեզուներ և մշակույթ» տարբերակները:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Քվեարկության 15 կողմ, 3 ձեռնպահ և 1 դեմ արդյունքների հիման վրա ընդունվեց
ֆակուլտետի նոր՝ «Եվրոպական լեզուներ և մշակույթ» անվանումը:

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

Որոշեցին՝

Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետից «Հանրապետության լավագույն
ուսանող» մրցանակաբաշխության թեկնածուներ առաջադրել թարգմանչական բաժնի
/անգլերեն/ 4-րդ կուրսի ուսանողուհիներ Վեներա Սասունի Ստեփանյանին և
Քրիստինե Աշոտի Օհանյանին:

Գիտխորհրդի նախագահ՝

Ս. Աբրահամյան

Գիտխորհրդի քարտուղար՝

Գ. Մուրադյան

27 հոկտեմբերի, 2017 թ.